

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՍԱՏԻ ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆ 4

**ՀԱՐՋԱԶՐՈՒՅՑ ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՀՐԱՉԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
ՎԱՐԴԱՆ ԱՎԱՆԵՍՅԱՆԻ ՀԵՏ** 10

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ**
ՊԱՌԼԱՍԵՆՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ,
ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 14

ՀՐԱՉԻԿ ՅԱՐՄԱՈՅԱՆ
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.
ՀԱՄԵՄՏԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 22

ՄԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ
ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՌՈՒՅԱԿԱՐԳԵՐԻ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԳԻՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ 28

**ՆՈՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ
ՍՈՆԱ ԵՍՍՅԱՆ**
ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԿԱԶՄՆ ՈՒ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ.
2015 ԹՎԱԿԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ 34

ՈԱՅԻԿ ԽԱՆԴԱՆՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ
ԱՐԴԻԱԿԱՆԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԸ 48

ГРАЖДАНСКОЕ ПРАВО

ЛЕВОН САРГСЯН

КОМПЕНСАЦИЯ ПО ДЕЛАМ О ЗАЩИТЕ ПРАВ
НА ИНТЕЛЛЕКТУАЛЬНУЮ СОБСТВЕННОСТЬ 56

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔ

ՎԱՅՐԱՄ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԻՅՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՍԱԿԵՐՊՎՈՂ ԲԱՆԿԻ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ 60

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍԵՐՊԵՅ ՄԵՂՐՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՐԳՈՎ
ՔՆՆՎՈՂ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ
ՀԱՎԱՔԵԼՈՒ (ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼՈՒ) ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԸ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ 68

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԳՈՒՐԳԵՆ ՔՈԹԱՆՅՅԱՆ

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 141-ՐԴ, 142-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ
ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐ 78

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ԴԵՎՈԼՈՒՏԻՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (EFFET DEVOLUTIF)
ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ
ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ 82

ԿՐԻՄԻՆԱԼՈՂԻԱ

ԻՎԵՏԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՅԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ 88

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎՃԱՐՈՒՄԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ
ԴԱՏԱՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԿԻՐԱՌԱԿԱՆ ՍԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 92

ՆԱՐԻՆԵ ՍԻՐԱԳԵՂՅԱՆ

ԵՐԵՒԱՅԻ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ
ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՊԱՐՁԱԲԱՆՄԱՆՆ
ՈՒՂՂՎԱԾ ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 96

ՄԱԿ ՓԳՀ-Ի ԱՍԲԻՈՆ

ՔՆԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ
«ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ
ԴԱՍԸՆԹԱՅԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ 104

ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

ՀՀ ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ 108

RESUME 120



Վահրամ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր,

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոն վարիչ

Արսեն ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ՄԻԱՅՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐԴՎՈՂ ԲԱՆԿԻ

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց շարքում իրենց առանձնահատուկ տեղն ունեն բանկային գործունեություն իրականացնող կազմակերպությունները, որոնք ներկայիս ֆինանսական շուկայի հիմնական մասնակիցներն են ու հաճախ բանկերն են թելադրում այդ խաղի կանոնները: Արդի շուկայական տնտեսությունը և շուկայական հարաբերություններն այլևս հնարավոր չէ պատկերացնել առանց բանկերի մասնակցության: Ընդհակառակը, հատկապես Հայաստանի Հանրապետությունում, թեկուզ մեկ բանկի ֆինանսական վիճակի վատթարացումն իր բացասական ազդեցությունն է ունենում տնտեսական հարաբերությունների և ֆինանսական շուկայի կայունության վրա: Ինչպես աշխարհի բոլոր երկրներում, Հայաստանի Հանրապետությունում ևս բանկերի գործունեությունը ենթարկվում է առանձնահատուկ կարգավորման, որը վերաբերում է նաև բանկերի միացման ձևով վերակազմակերպումներին, ինչպես նաև վերակազմակերպվող բանկի մասնակիցների իրավունքներին և դրանց պաշտպանության երաշխիքներին:

Այսպես, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի¹ (այսուհետ՝ Բանկերի մասին օրենք) 68-րդ հոդվածի համաձայն՝ բանկի կամ մի քանի բանկերի՝ մեկ այլ բանկի միանալու դեպքում միացող բանկերը կնքում են միացման պայմանագիր՝ ստանալով Կենտրոնական բանկի

նախնական հավանությունը: Միացման պայմանագրի կնքման նախնական համաձայնություն ստանալու համար բանկը Կենտրոնական բանկի սահմանած ձևով, կարգով և ժամկետներում Կենտրոնական բանկ է ներկայացնում գործարքի էական պայմանները, անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները:

Կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հուլիսի 19-ի «Բանկերի միացման կարգը հաստատելու մասին» թիվ 190-Ն որոշմամբ² (այսուհետ՝ թիվ 190-Ն որոշում) սահմանվում են բանկերի կողմից միացման պայմանագրի կնքման նախնական հավանություն ստանալու համար Կենտրոնական բանկ ներկայացվող տեղեկությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, միացման պայմանագրի հաստատման համար ներկայացվող փաստաթղթերը և տեղեկությունները և այլ հարաբերություններ:

Միաժամանակ, Կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հուլիսի 19-ի թիվ 190-ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» թիվ 193-Ն որոշմամբ³ Կենտրոնական բանկը սահմանել է, որ բանկի միացման ձևով վերակազմակերպվելու դեպքում բացի բաժնետոմսերի փոխարկման դասական եղանակներ կիրառելուց, միացող բանկի բաժնետերերին իրենց բաժնետոմսերի դիմաց կարող են տրամադրվել ինչ-

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ 2017 1 - 2 (211 - 212)

ՊԱՏԱԿԱՆ
Իշխանություն

Կորպորատիվ իրավունք

պես պահպանվող բանկի բաժնետոմսեր կամ այլ արժեթղթեր, այնպես էլ դրամական հատուցում:

Նոր փոփոխությունը նշանակում է, որ բանկերի միացման դեպքում կարող է տեղի ունենալ ոչ միայն բաժնետոմսերի փոխարկում, որի արդյունքում միացող բանկի բաժնետերերը դառնում են պահպանվող բանկի բաժնետեր, այլ նաև այդ նույն բաժնետերերին կարող են տրամադրվել իրենց բաժնետոմսերին համարժեք դրամական հատուցում, որի արդյունքում այդ բաժնետերերն այլևս կորցնում են իրենց մասնակցության իրավունքը պահպանվող բանկում:

Հետաքրքրական է, որ թիվ 193-Ն որոշմամբ որպես նման փոփոխության հիմնավորում առաջին հերթին մատնանշվում է միջազգային իրավական փորձը: Մասնավորապես նշվում է, որ զարգացած կորպորատիվ իրավունք ունեցող երկրների օրենսդրությունները (օրինակ՝ Delaware General Corporation Law (Title 8, Chapter 1 of the Delaware Code), UK Companies Act 2006) միացման իրականացման տարբերակներ չեն պարտադրում կողմերին, ընդհակառակը, վերջիններս թույլատրում կամ սահմանում են կորպորատիվ միացումների և ձեռքբերումների հնարավոր բազմաթիվ եղանակներ: Բացի այդ, որպես հիմնավորում նշվում է, որ ներպետական իրավական կարգավորումները չեն սահմանափակում, թե ինչ եղանակով կամ ինչ բիզնես կառուցակարգերի կիրառմամբ կողմերը պետք է իրականացնեն միացումը, այդ թվում՝ դրա դիմաց վճարումները, իսկ օրենսդրական կարգավորումների տրամաբանությունն այն է, որ եթե գործարքը համապատասխանում է պատշաճ ընթացակարգի (Due Process) և արդար գնի (Fair Price) միջազգային պրակտիկայում ճանաչված սկզբունքներին, և եթե բավարարվել են վերահսկող մարմնի կողմից ներկայացված պահանջները, ապա գործարքի պայմանները, այդ թվում՝ միացող բանկի բաժնետերերին՝ իրենց բաժնետոմսերի դիմաց հատուցման եղանակը կամ միջոց-

ները, կարող են ազատորեն որոշել միացման կողմերը:

Այսինքն՝ բանկերի միացման ձևով վերակազմակերպման գործընթացում բանկերին տրվել է գրեթե բացարձակ ազատություն՝ որոշելու պահպանվող բանկի բաժնետերերի շրջանակը:

Նման պայմաններում հարց է առաջանում, թե միացման ձևով վերակազմակերպվող բանկի մասնակիցներին իրենց բաժնետոմսերի դիմաց դրամական հատուցում տրամադրելու վերաբերյալ իրավակարգավորումները, կորպորատիվ տիպի իրավաբանական անձ համարվող բանկերի միացման ձևով վերակազմակերպման գործընթացում դրանց մասնակիցների իրավունքների պաշտպանության և երաշխավորման գործող իրավակարգավորումների համատեքստում, ապահովում են արդյոք ողջամիտ հավասարակշռություն բանկերի (միացող և պահպանվող) կորպորատիվ շահերի, խոշոր և փոքրամասնություն կազմող բաժնետերերի իրավունքների միջև:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի⁴ (այսուհետ՝ Բաժնետիրական ընկերությունների մասին) 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերակազմակերպման միջոցով ստեղծվող կամ միացման հետևանքով ընդլայնվող ընկերության բաժնետոմսերը (բաժնեմասերը) փոխարկման եղանակով համամասնորեն տեղաբաշխվում են վերակազմակերպման մասին որոշումն ընդունելու պահին այդ որոշումն ընդունած իրավաբանական անձանց բոլոր մասնակիցների միջև՝ բաժնետոմսերի շուկայական արժեքով: Ընդ որում, փոխարկման հարաբերակցությունը պետք է նույնը լինի տվյալ տեսակի (դասի) յուրաքանչյուր բաժնետոմսի (բաժնեմասի) համար: Եթե վերակազմակերպվող ընկերություններից որևէ մեկի միևնույն տեսակի (դասի) արժեթղթերի սեփականատերերի քանակը 50 կամ ավելի է, ապա վերակազմակերպվող յուրաքանչյուր ընկերության արժեթղթերի շուկայա-



Կորպորատիվ իրավունք

կան արժեքի սահմանումը պարտադիր է անկախ գնահատողի կողմից:

Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի այս կարգավորումը ցույց է տալիս, որ վերակազմակերպման գործընթացում, այդ թվում՝ միացման ժամանակ բաժնետոմսերի կամ բաժնեմասերի փոխարկումը պարտադիր է և բաժնետոմսերի դիմաց դրամական հատուցման կարգ չի նախատեսում:

Միաժամանակ, Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 1-ին հոդվածը սահմանում է, որ բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային, ապահովագրական և այլ գործունեության բնագավառներում բաժնետիրական ընկերությունների ստեղծման, վերակազմակերպման և լուծարման կարգի և իրավական վիճակի առանձնահատկությունները սահմանվում են այլ օրենքներով և իրավական ակտերով:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արժեթղթերի փոխարկման միասնական հասկացություն սահմանված չէ, տեսական գրականության մեջ և արժեթղթերի փոխարկման հասկացությունը չունի հստակ բանաձևում: Մասնավորապես՝ Մինենկոն փոխարկումը բնութագրում է որպես նոր թողարկված արժեթղթերի տեղաբաշխման միջոց հին արժեթղթերի հետ փոխանակելու և դրանք շրջանառությունից հանելու տեսքով⁵: Այլ տեսակետի համաձայն՝ արժեթղթերի փոխարկման գործընթացը բնութագրվում է որպես իրավաբանական անձի մեկ տեսակի արժեթղթերի փոխանակում մեկ այլ կազմակերպության նույն տեսակի կորպորատիվ արժեթղթերի հետ⁶: Ժդանովը, անդրադառնալով վերակազմակերպման դեպքում բաժնետոմսերի փոխարկման խնդիրներին, այդ գործընթացը բնութագրում է որպես բաժնետոմսերի տեղաբաշխման միջոց, որի արդյունքում վերակազմակերպման գործընթացում մասնակցող կազմակերպությունների արժեթղթերը փոխարկվում են վերակազմակերպման արդյունքում ստեղծվող կազմակերպություններ

րի արժեթղթերի կամ շարունակում են գոյություն ունենալ և ենթակա են մարման⁷: Փոխարկումը դիտարկվում է նաև որպես նովացիա, որը տեղի է ունենում արժեթղթերի թողարկման գործընթացում⁸: Արժեթղթերի փոխարկումը տեսության մեջ ներկայացվում է նաև որպես բաժնետոմսերի տեղաբաշխման ձևերից մեկը⁹:

Վերը նշվածը թույլ է տալիս բաժնետոմսի փոխարկումը ամենալայն իմաստով բնութագրել որպես բաժնետոմսի փոխակերպում այլ անվանական արժեք ունեցող կամ մեկ այլ ընկերության կողմից թողարկված բաժնետոմսերի:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ կարող ենք փաստել, որ թիվ 190-Ն որոշմամբ սահմանված միացման ձևով վերակազմակերպվող բանկի մասնակիցներին իրենց բաժնետոմսերի դիմաց դրամական հատուցում տրամադրելու գործընթացը չի կարելի դասական իմաստով դիտարկել որպես արժեթղթերի փոխարկում, քանի որ արժեթղթերի փոխարկումը ենթադրում է մեկ արժեթղթի, տվյալ դեպքում բաժնետոմսի (բաժնեմասի) փոխակերպում այլ արժեթղթի (բաժնետոմս, բաժնեմաս), իսկ քննարկվող դեպքում, ըստ էության, բանկի փոքրամասնություն կազմող բաժնետերերի համար տեղի է ունենում բաժնետոմսի առուվաճառքի հարկադիր գործընթաց, որի վրա ազդելու որևէ իրական հնարավորություն վերջիններս, ըստ էության, չունեն:

Հաջորդ կարևոր խնդիրն այն է, թե միացման ձևով վերակազմակերպվող բանկի մասնակիցներին իրենց բաժնետոմսերի դիմաց դրամական հատուցում տրամադրելու վերաբերյալ իրավակարգավորումները որքանով են երաշխավորում փոքրամասնություն կազմող բաժնետերերի, մասնավորապես՝ վերակազմակերպման մասին որոշմանը դեմ քվեարկած կամ քվեարկությանը չմասնակցած բաժնետերերի իրավունքները:

Բանկերի մասին օրենքի 36-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփական

նատերերը (մասնակիցները) իրավունք ունեն քանակից պահանջելու մասնակցության հետզման գնի որոշում և իրենց պատկանող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) կամ դրանց մի մասի հետզմում, եթե որոշում է ընդունվել բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և տվյալ մասնակիցները քվեարկել են բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությամբ չեն մասնակցել:

Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր առևտրային բանկերի կանոնադրությունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ բոլոր բանկերում վերակազմակերպման մասին որոշման ընդունման համար նախատեսում է դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ը, որը նույն օրենքով սահմանված նվազագույն չեմն է: Միաժամանակ, օրենքով սահմանվում է, որ ժողովի իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

Նման պայմաններում ստացվում է, որ իրավաբանական անձի վերակազմակերպման վերաբերյալ ժողովի որոշումը կարող է ընդունվել կազմակերպության կանոնադրական կապիտալում ընդամենը 40 տոկոս մասնակցություն ունեցող մասնակիցների ձայներով: Այսինքն՝ կարող է առաջ գալ կազմակերպության առավելագույնը 60 տոկոս մասնակիցների և նվազագույնը 25 տոկոս մասնակցություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության խնդիր:

Սեր կարծիքով, եթե բանկը միացման կարգում նախատեսում է դրամական (փողային) հատուցման տրամադրում միացող բանկի բաժնետերերին կամ դրամական

հատուցում և թիվ 190-ն որոշման նախատեսված այլ եղանակների համակցություն, ապա վերակազմակերպման վերաբերյալ որոշման քվեարկությանը չմասնակցած կամ դեմ քվեարկած մասնակիցների՝ բաժնեմասի հետզմում պահանջելու իրավունքը չի կարող համարվել բավարարելաշիք հետևյալ պատճառով:

Բանկը նախատեսում է, որ իր բաժնետերերը կամ դրանց մի մասը միացումից հետո բաժնետոմսերի կամ բաժնեմասերի փոխարկման արդյունքում ոչ թե դառնալու են պահպանվող բանկի մասնակից, այլ իրենց բաժնեմասի դիմաց ստանալու են դրամական հատուցում: Նման պարագայում իմաստագուրկ է դառնում, օրինակ, որոշմանը դեմ քվեարկած մասնակցի կողմից իր բաժնեմասի հետզմում պահանջելը, քանի որ առանց դրա էլ նա ստանալու է դրամական հատուցում: Եվ կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ բաժնետերը, չցանկանալով մտնել դատական գործընթացների մեջ և գիտակցելով, որ դրամական հատուցումը քիչ, թե շատ ողջամիտ է, դեմ չի քվեարկի իր իրավունքներն ըստ էության խախտող որոշման դեմ:

Բացի այդ, Բանկերի մասին օրենքով սահմանված են բաժնետոմսի հետզմման այնպիսի սահմանափակումներ, որոնք գործնականում անիրատեսական են դարձնում այդ իրավունքի իրացման հնարավորությունը:

Այսպես, Բանկերի մասին օրենքի 36-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ մասնակցության հետզմման համար անհրաժեշտ է Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությունը: Կենտրոնական բանկը կարող է մերժել այդ համաձայնություն տալը, եթե մասնակցության հետզմման դեպքում բանկն ի վիճակի չի լինի լրիվ բավարարելու իր պարտատերերի պահանջները կամ կխախտի հիմնական տնտեսական նորմատիվները կամ էլ մասնակցության հետզմումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի ապակայունացմանը:

Այսինքն՝ պրակտիկայում հնարավոր



Կորպորատիվ իրավունք

են դեպքեր, երբ վերը նշված հիմքերից մեկով Կենտրոնական բանկը համաձայնություն չտա մասնակցության հետզմանը, որի արդյունքում բանկի միացմանը դեմ քվեարկված մասնակիցը գրկվում է իր իրավունքների պաշտպանության օրենսդրական մեխանիզմների արդյունավետ օգտագործման հնարավորությունից:

Թիվ 190-Ն որոշման հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները ստանալուց հետո բանկերի միացման նախնական հավանության վերաբերյալ որոշման կայացման (ընդունման) հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Բանկերի մասին օրենքի 68-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:

Բանկերի մասին օրենքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կենտրոնական բանկի խորհուրդը սույն հոդվածի 2-րդ կետում նշված համապատասխան գործարքի էական պայմանները, անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկություններն ստանալու պահից՝ մեկամսյա ժամկետում կայացնում է համապատասխան որոշում:

Սույն օրենքի 4-րդ մասի համաձայն՝ Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է հավանություն չտալ միացման պայմանագրի կնքմանը, եթե բանկի (բանկերի) վերակազմակերպումը կամ ներկայացված փաստաթղթերը հակասում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, պահանջվող փաստաթղթերը չեն ներկայացվել պատշաճ կարգով և ձևով կամ ներկայացվել են թերի, միացման արդյունքում պահպանվող բանկի ֆինանսական վիճակն էապես կվտանգվի, միացման արդյունքում բանկը բանկային շուկայում ձեռք կբերի գերիշխող կամ մենաշնորհի դիրք, գործարքի արդյունքում կողմերից որևէ մեկի ավանդատուների, այլ պարտատերերի շահերը կվտանգվեն:

Նշված հիմքերի ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրել, որ եթե թիվ 190-Ն որոշմամբ պահանջվող տեղեկությունները և այլ փաստաթղթեր (օրինակ՝ միացման կարգը, պայմաններն ու ժամկետները, հա-

մատեղ ժողովում քվեարկության և որոշումների ընդունման կարգը, միացմանը մասնակցող բանկերի համատեղ ժողովի գումարման ժամկետը, հրավիրման և անցկացման կարգը և այլն) համապատասխանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին, չեն հանգեցնում բանկի ֆինանսական վիճակի վատթարացման, մրցակցության և ավանդատուների շահերի համար չեն ունենում բացասական ազդեցություն, Կենտրոնական բանկը տալիս է նախնական համաձայնություն:

Նշվածը, իր հերթին, ենթադրում է, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ բանկին պարտավորեցնել միացման կարգը սահմանել որևէ կոնկրետ ձևով, իհարկե բացառությամբ հենց օրենքով և թիվ 190-Ն որոշմամբ սահմանված պահանջների: Դրա մասին է վկայում թիվ 193-Ն որոշման հիմնավորման մեջ նշված այն դրույթը, որի համաձայն՝ եթե գործարքը համապատասխանում է Պատշաճ ընթացակարգի (Due Process) և Արդար գինի (Fair Price) միջազգային պրակտիկայում ճանաչված սկզբունքներին և եթե բավարարվել են վերահսկող մարմնի կողմից ներկայացված պահանջները, ապա գործարքի պայմանները, այդ թվում՝ միացող բանկի բաժնետերերին՝ իրենց բաժնետոմսերի դիմաց հատուցման եղանակը կամ միջոցները, կարող են ազատորեն որոշել միացման կողմերը:

Պատշաճ ընթացակարգ (Due Process) և արդար գին (Fair Price) կատեգորիաները միջազգային իրավունք են մտել անգլիական ընդհանուր իրավունքից¹⁰:

Ամենաընդհանուր բնորոշմամբ պատշաճ ընթացակարգն անձի իրավունքները պահպանելու պետության պարտականությունն է հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտներում, որը առաջին հերթին ներառում է մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանությունը և դրանց իրացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը (լսված լինելու, ողջամիտ ժամկետում պատաս-

Կորպորատիվ իրավունք

խան ստանալու, իր իրավունքներին միջամտող որոշումները բողոքարկելու և այլն)¹¹:

Բանկերի միացման գործընթացում արդեն պատշաճ ընթացակարգը ենթադրում է միացման գործարքի կնքման ժամանակ միջազգայնորեն ճանաչված բոլոր սկզբունքների, գործարար շրջանառության սովորույթների և իրավական ակտերով սահմանված պարտադիր նյութական և ընթացակարգային նորմերի պահպանումը¹²:

Ինչ վերաբերում է արդար գնին, ապա պետք է նշել, որ այն ավելի համալիր և բազմակողմանի կատեգորիա է և ընդհանուր իրավունքի տարբեր դատական գործերի ուսումնասիրությունը վկայում է, որ դատարանները շատ դեպքերում դժվարություններ են ունենում արդար գնի որոշման ժամանակ, քանի որ պետք է հաշվի առնեն բազմաթիվ տնտեսական գործոններ¹³:

Ընդհանրացնելով ուսումնասիրությունը՝ կարող ենք փաստել, որ արդար գինը միջազգային իրավունքում ընկալվում է որպես տնտեսական կոնցեպցիա, որի դեպքում գնի մեջ հաշվարկվում են միայն տնտեսապես հիմնավորված ծախսերը, իսկ գործարքից հասույթը չի գերազանցում միջին շուկայական արժեքը¹⁴:

Արդար գնի կողքին շատ հաճախ կիրառում են նաև արդար արժեք (fair value) տերմինը, որը բնութագրվում է որպես գին, որը կվճարվեր սովորական գործարքի շրջանակներում ակտիվի, բաժնետոմսի գնահատման ժամանակ¹⁵:

Այս սկզբունքների պահպանումը որոշակի առումով տալիս է բանկի բաժնետերերին երաշխառված առ այն, որ միացման այս կամ այն կարգ սահմանելիս իրենք կստանան լաված լինելու և իրենց դիրքորոշումն արտահայտելու համար, որը կարող է ապահովվել պատշաճ ծանուցման և որոշումների կայացմանը մասնակից դարձվելու միջոցով: Բացի այդ, արդար գնի և արդար արժեքի սկզբունքների պահպանումն էլ բանկի մասնակիցներին

հնարավորություն է տալիս սպասելու իրենց բաժնեմասի կամ բաժնետոմսի դիմաց արդար գին ստանալուն, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրական կարգավորումների համատեքստում կարելի է համարել բաժնետոմսի շուկայական արժեքը:

Վերը թվարկված երաշխիքներն արդյունավետ կարող են գործել այն դեպքերի համար, երբ բաժնետերերն առանց արտաքին ճնշումների և այլ կողմնակի ազդեցության կողմ են քվեարկել վերակազմակերպման մասին որոշմանը՝ չցանկանալով այլևս մնալ պահպանվող բանկի բաժնետեր և սպասում են միայն արդար հատուցում ստանալուն, իսկ այն դեպքերում, երբ բանկի մասնակիցը դեմ է քվեարկել միացման մասին որոշմանը, ապա քննարկվող երաշխիքներն արդյունավետ համարել չի կարելի:

Նախ, եթե ենթադրենք, որ դատական գործընթացի արդյունքում կպարզվի, որ խախտվել է արդար գնի սկզբունքը և բաժնետիրոջը չի տրամադրվել իր բաժնեմասին համապատասխան չափով հատուցում, ապա դրա արդյունքում բանկի վերակազմակերպման հետադարձ տեղի չի ունենա, այլ միայն պահպանվող բանկը ստիպված կլինի փոխհատուցել միացող բանկի բաժնետիրոջը:

Ուստի գտնում ենք, որ պատշաճ ընթացակարգի և արդար գնի սկզբունքներն ապահովում են, ըստ էության բանկի միացմանը դեմ չարտահայտված մասնակիցների՝ ողջամիտ հատուցում ստանալու իրավունքը և չեն լուծում քվեարկությանը չմասնակցած կամ դեմ քվեարկած մասնակիցների իրավունքների պաշտպանության հարցը:

Անդրադառնալով թիվ 193-Ն որոշման հիմքում դրված միջազգային իրավական փորձին, մասնավորապես՝ Մեծ Բրիտանիայի Կոմպանիաների մասին 2006 թվականի ակտին՝ պետք է նշել հետևյալը:

Անգլիական իրավունքում նախատեսված է վերակազմակերպման գործընթացում վերակազմակերպվող կորպորացիա-



Կորպորատիվ իրավունք

յի իրավունքների պաշտպանության առավել արդյունավետ և բազմաստիճան համակարգ, որի պայմաններում միացող բանկի բաժնետերերին իրենց բաժնեմասի դիմաց դրամական հատուցում տրամադրելը կարելի է համարել ողջամիտ և արդարացված:

Վերակազմակերպման մասին անգլիական իրավունքի հիմքը կազմում է երեք տարր՝ վերակազմակերպմանը մասնակցող կողմերի կշռադատված որոշումը, վերակազմակերպման մասին որոշման՝ ձայների որակյալ մեծամասնությամբ ընդունում և դատարանի վճռորոշ դերը: Վերակազմակերպման նախագիծը քննարկվում է դատարանի կողմից, որը, լսելով բոլոր շահագրգիռ կողմերին, որոշում է թույլատրել վերակազմակերպումը, թե արգելել այն: Դատարանը գնահատում է այն ռիսկեր, որը ողջամտորեն կարող են կրել վերակազմակերպվող իրավաբանական անձի ներդրողները: Եթե կազմակերպության մասնակիցները կամ պարտատերերը գտնում են, որ չեն ստացել վերակազմակերպման մասին բավարար տեղեկատվություն կամ համաձայն չեն միացման կարգի նախագծին, ապա կարող են դիմել դատարան: Վերակազմակերպման մասին որոշումն ընդունվում է կազմակերպության 3/4 քվեարկող բաժնետոմսերին տիրապետող մասնակիցների ձայներով, ընդ որում գնահատվում է ոչ թե յուրաքանչյուր մասնակցի անհատական ձայնը, այլ համանման շահեր հետապնդող խմբերի դիրքորոշումը: Բոլոր դեպքերում, վերակազմակերպման վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում է դատարանը¹⁶:

Այս ամենի արդյունքում վերակազմակերպման գործընթացը ներառում է տեղեկատվության բացահայտման, հրապարակայնության, գնահատման, հաշվապահական հաշվառման վարման և բոլոր մասնակիցների նկատմամբ հավասար վերաբերմունք ցուցաբերելու ողջամիտ կառուցակարգեր, որի պայմաններում, բացի գուտ բաժնետոմսերի փոխարկումից, բաժնետերերին նաև դրամական հատու-

ցում տրամադրելու կանոնակարգումներ սահմանելը կարելի է համարել արդարացված:

Ընդհանրապես, ցանկացած օրենսդրական փոփոխություն կատարելիս անհրաժեշտ է ցուցաբերել համակարգային մոտեցում, չդեկավարվել իրավիճակային լուծումներ տալու մասնավոր դեպքերով¹⁷, անպայմանորեն պարզել կատարվող փոփոխության արդյունքում փոփոխվող նորմերի կետ համակարգային առումով ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված նորմերի իրացվելիության մակարդակի հնարավոր փոփոխությունները, կարգավորվող իրավահարաբերության մասնակիցների իրավունքների ապահովման հնարավորությունը, ինչպես նաև պրակտիկ կիրառելիության ողջամտությունն ու նպատակահարմարությունը: Ցանկացած միջազգային կամ արտասահմանյան փորձի իմպլեմենտացում կատարելիս պետք է դիտարկել ոչ միայն հենց իմպլեմենտացվող նորմը կամ կանոնը դիսկրետ, այլ համակարգային կապի մեջ տվյալ պետության իրավական համակարգի, իրավական մշակույթի, իրավական նորմերի պրակտիկ իրացման և ընկալման առանձնահատկությունների հետ, վեր հանել համապատասխան իրավական կանոնը սահմանող մարմնի կամքը և նպատակը, ինչպես նաև անպայմանորեն ուսումնասիրել տվյալ նորմի կիրառման վիճակագրությունը: Միայն այդ դեպքում միջազգային փորձի ներառումը կարելի է համարել արդարացված:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Կենտրոնական բանկի կողմից թիվ 193-Ն որոշմամբ առաջարկվող փոփոխությունները, որոնց համաձայն՝ միացման ձևով վերակազմակերպող բանկի բաժնետերերին իրենց բաժնետոմսերի դիմաց կարող է տրամադրվել դրամական հատուցում, որի արդյունքում նրանք այլևս չեն կարող լինել պահպանվող բանկի բաժնետեր, համարվում են ռիսկային և անարդյունավետ կազմակերպության մասնակիցների իրավունքների

պաշտպանության գործող իրավակարգավորումների պայմաններում, չեն ապահովում բանկի կորպորատիվ շահերի և դրա մասնակիցների իրավունքների պաշտպանության միջև ողջամիտ հավասարակշռություն, ինչպես նաև իրական հնարավորություն են ստեղծում պահպանվող բանկի բաժնետերերի (ինչու չէ նաև հենց միացող

բանկի որոշ բաժնետերերի) համար միացող բանկի բաժնետոմսերը ձեռք բերելու միջոցով գրկելու «անցանկալի բաժնետերերին» պահպանվող բանկի կանոնադրական կապիտալում հետագա մասնակցության իրավունքից՝ առանց վերջիններիս էական հակազդեցությանը հանդիպելու:

1. ՀՀ օրենքը «Բանկերի և բանկային գործունեության մասին» ընդունված 30.06.1996, ուժի մեջ է մտել 29.08.1996, ՀՀԱԺՏ 1996/12:

2. Ընդունվել է 2011 թվականի հուլիսի 19-ին, ուժի մեջ մտել 2011 թվականի սեպտեմբերի 11-ին, ՀՀԳՏ 2011.09.01/21(404) Հոդ. 331:

3. Ընդունվել է 2016 թվականի նոյեմբերի 8-ին, ուժի մեջ մտել 2016 թվականի նոյեմբերի 25-ին, ՀՀԳՏ 2016.11.15/23(566) Հոդ. 299:

4. ՀՀ օրենքը «Բաժնետիրական ընկերությունների մասին», ընդունվել է 25.09.2001թ., ուժի մեջ է մտել 27.10.2001: ՀՀՊՏ 2001.11.06/34(166):

5. **Синенко А. Ю.** Эмиссия корпоративных ценных бумаг: правовое регулирование, теория и практика. М., Статут, 2002, с. 138.

6. **Ломакин Д. В.** Некоторые вопросы размещения акций при реорганизации акционерных обществ// Законодательство. 2000, N4, с. 16.

7. **Жданов Д. В.** Реорганизация акционерных обществ в Российской Федерации. М., Лекс-Книга, 2002, с. 153.

8. **Жуков А. С. Лукьянцев А. А.** Анализ недействительности/незаконности выпуска акций//Рынок ценных бумаг. 2004, N5, с. 39.

9. **Ալինաբայան Վ. Գ.** Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), մեծագրություն, ԵՊՀ հրատ., Եր, 2013, էջ 166:

10. Պատշաճ ընթացակարգի առաջին լեզվաբնորոշումը ասհմանվել է «Մագնա Կարտայում» (“The Magna Carta”), մասնավորապես՝ 39-րդ բաժնում, հետևյալ ձևակերպմամբ՝ ոչ ոք չի կարող ձեռքակալվել կամ բանտարկվել առանց պատշաճ իրավական և դատական ընթացակարգի: Աղբյուրը՝ www.bl.uk:

11. Black’s Law Dictionary, Sixth Edition, էջ 500:

12. Mergers and acquisitions in the new era of Companies Act, 2014, էջ 12:

13. Նշվածի մասին առավել մանրամասն տես հետևյալ դատական գործերը՝ Rosenblatt v. Getty Oil Co., 493 A.2d 929, 942 (Del. 1985), Kahn v. Tremont Corp., No. Civ. A. 12339, 1996 WL 145452, at *9 (Del. Ch. Mar.21, 1996), Ryan v. Tad’s Enters., Inc., 709 A.2d 682, 693 n.14 (Del. Ch. 1996), Coggins

v. New England Patriots Football Club, Inc.:

14. Նշված մասին առավել մանրամասն տես Rutheford B. Campbell Jr. Fair Value and Fair Price in Corporate Acquisitions, University of Kentucky, 1999, էջ 128:

15. Rutheford B. Campbell Jr, նշված աշխատությունը, էջ 118:

16. UK Companies Act, 2006, աղբյուրը՝ <http://www.legislation.gov.uk/>:

17. Հարկ է նշել, որ բանկերի միացման գործընթացները նորություն չեն Հայաստանի ֆինանսական շուկայում, իսկ Կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 376-Ն որոշման ընդունումից հետո, երբ բանկերի համար կանոնադրական կապիտալի նվազագույն չափը 5 միլիոնից բարձրացվեց 30 միլիոնի, դրանք ավելի ինտենսիվացան, որի վառ օրինակն է այն փաստը, որ նախկինում գործող 21 առևտրային բանկերից 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ մնացել են միայն 18-ը (աղբյուրը՝ cba.am): Այդ երկու տարվա ընթացքում Կենտրոնական բանկը որևէ փոփոխություն չի կատարել թիվ 190-Ն որոշման մեջ: Եվ միայն 2016 թվականի նոյեմբերի 8-ին Կենտրոնական բանկի խորհուրդը թիվ 193-Ն որոշմամբ ասիմանեց քննարկվող իրավակարգավորումը, որի հիմնավորումների մեջ բացակայում են նախկինում մնալ կարգավորումների բացակայության արդյունքում առաջացած խնդիրները, որոնց լուծմանն էլ պետք է ուղղված լինի առաջակվող իրավակարգավորումը: Ընդ որում, այդ փոփոխությունն ուժի մեջ է մտել 2016 թվականի նոյեմբերի 25-ին, որին անմիջապես հաջորդել է «Հայկական զարգացման բանկ» ԲԲԸ-ի և «Արարատ բանկ» ԲԲԸ-ի միացման գործընթացը: Մասնավորապես, 2016 թվականի նոյեմբերի 25-ին «Հայկական զարգացման բանկ» ԲԲԸ-ն որոշում է միանալ «Արարատ բանկ» ԲԲԸ-ին, իսկ 2016 թվականի դեկտեմբերի 15-ին Կենտրոնական բանկի խորհուրդը հաստատել և գրանցել է նշված բանկերի միացումը: Այս ամենի արդյունքում թիվ 193-Ն որոշմամբ կատարված փոփոխությունը թվում է տարօրինակ և տպավորություն է ստեղծվում, որ այն, ըստ էության, նպատակ է հետապնդել ապահովելու «Հայկական զարգացման բանկ» ԲԲԸ-ի և «Արարատ բանկ» ԲԲԸ-ի միացման գործընթացը: